

Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/26070/02/19 քաղաքացիական գործով 10.03.2023 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

10.03.2023 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2023 թվականի մարտի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով Սոնա Աղեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Մարությանի ընդդեմ Սոնա Աղեկյանի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման ու հերքման պարտավորեցնելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2022 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Հայկ Մարությանի հայցն ընդդեմ Սոնա Աղեկյանի՝ պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման ու հերքման պարտավորեցնելու պահանջների մասին մերժել:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ հատուկ կարծիքս այդ մասերի վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը և դրա հիմնավորումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Տվյալ դեպքում բողոք բերած անձը որպես **վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք և հիմնավորում** վճռաբեկ բողոքում նշել է հետևյալը.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ փյալ նորմին փրված մեկնաբանությանը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 3. Սույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝

1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը.

Նշված իրավական հիմքերը տեղայնացնելով սույն գործի փաստական հիմքերի և Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումներում, գտնում ենք, որ Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները հետևյալն են.

Ստորադաս դատարանը և Վերաքննիչ դատարանը դատական ակտերը կայացնելիս առերևույթ խախտել են մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար հետևյալ խախտումները՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, այն հիմնավորմամբ, որ դատական ակտի սխալ պարճառաբանվածության և հիմնավորվածության արդյունքում Բողոքաբերի կողմից հրապարակայնորեն հնչեցված արտահայտությունները որակել են որպես զրպարություն՝ խախտելով Հայցվորի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու սահմանադրական և կոնվենցիոն իրավունքը:

Գտնում ենք նաև, որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի, 191-րդ, 192-րդ 57-րդ, 62-րդ, 66-րդ, 74-րդ հոդվածների, 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 6-րդ կետերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանությունները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1843(ՎԴ) նախադեպային որոշմամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Ցիհան Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի գործով արտահայտված դիրքորոշումներին: Ինչպես նաև նշված նորմերը կիրառելիս Վերաքննիչ դատարանը և դատարանը թույլ են տվել այնպիսի խախտումներ, որոնք խաթարել են արդարադատության բուն էությունը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը և դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի հիմքով հաստատել են, որ Պատասխանողի կողմից հնչեցված արտահայտությունները պարունակում են զրպարություն՝ առանց ապացուցման պարտականությունը իրավաչափորեն բաշխելու, առանց Պատասխանողի վրա պարտականություն դնելու այն հարցի առնչությամբ, որ Պատասխանողը ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու իր խոսքի ճշմարտությունը և հիմնավորվածությունը, եզրահանգել է, որ Պատասխանողը չի ապացուցել այն հանգամանքը, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու իր խոսքի ճշմարտությունը և հիմնավորվածությունը:

Դատարանն անտեսել է Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային պրակտիկան, ըստ որի համանման գործերով Հայցվորի վրա է դրվում ևս մեկ կարևոր փաստի ապացուցման պարտականություն՝ Զրպարության նպատակը:

Այսպես, անդրադառնալով զրպարության և վիրավորանքի օրենսդրական կարգավորման էության բացահայտման խնդրին Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում հայտնել է, արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել

տեղեկարկության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկարկության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

Նույն դիրքորոշումն է հայտնել նաև Սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրականության պարզման վերաբերյալ դիմումի քննության արդյունքում՝ «Քննության առարկա հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ արտահայտությունը չի կարող որպես վիրավորանք որակվել, եթե այն ունի որոշակի փաստական հիմք: Այսինքն, ոչ թե պետք է վիրավորանք համարել գնահատողական դատողությունը, այլ անձի պարիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը: Այսպես կարևոր է նաև «արատավորելու նպատակով» արտահայտության իրավական իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համարեքստում այն ենթադրում է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ուրնձգություն անձի արժանապատվության նկատմամբ»:

Վճռաբեկ դատարանն իր վերոնշյալ որոշմամբ բացահայտել է նաև դիտարկության առկայության պարզման համար այն անհրաժեշտ գործողությունների շրջանակը, որոնք պետք է իրականացվեն գործը քննող դատարանների կողմից: Այսպես՝ «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում»:

Համադրելով վերոնշյալ իրավական դատողությունները մեր գործում առկա փաստերի հետ, պնդում ենք, որ Պատասխանողը չի ունեցել իր գնահատողական դատողություններով Հայցվորին արատավորելու, անվանարկելու դիտավորություն:

Չնայած այն հանգամանքին, որ դիտավորության առկայության ապացուցման բեռը պետք է դրվեր Հայցվորի վրա, այնուամենայնիվ Պատասխանողը ներկայացրել է իր վերոնշյալ պնդումը հիմնավորող փաստեր, որոնք կրկին չեն հեղազուտվել և չեն գնահատվել Դատարանի կողմից:

Այսպես, Պատասխանողը մինչև Ասուլիսի օրը իր գնահատողական դատողությունները ներկայացնելը բազմիցս հանդես է եկել հրապարակային ելույթներով և հրապարակումներով, որոնց ժամանակ ուղղակի հարցադրումներ է արել Երևանի քաղաքապետին՝ «Սանիթեքի» հետ կնքված պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ և չի ստացել որևէ պատասխան:

Կարևոր է, որ Հայցադիմումի պատասխանում նշված հղումներում առկա տեղեկարկական նյութերը չեն հեղազուտվել Դատարանի կողմից, ինչը Վերաքննիչ դատարանը իրավաչափ է համարել:

Վերաքննիչ դատարանի ու դատարանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած դիրքորոշումը (Ֆիհան Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի գործով) հաշվի առնվելու և դատական ակտի հիմքում դրվելու պարագայում, գործի ելքը այլ կլիներ:

Մասնավորապես, Ֆիհան Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի (Cihan Öztürk v. Turkey) գործով փաստական հանգամանքները հետևյալն էին՝

Դիմումատուին հրապարակում էր կատարել, որում մեղադրում էր բարձր պաշտոնյաներին հանրային միջոցների վաթնամյա մեջ:

Ազգային դատարանը գտել էր, որ դիմումատուի հրապարակումը զրպարտչական է եղել:

ՄԻԵԴ-ն այս գործով արձանագրեց, որ բոլոր այն հայտարարությունները, որոնք վերաբերվում են պաշտոնյաների կողմից պաշտոնեական հանցանքի/զանցանքի կամ կոռուպցիայի մասին ենթակա են շար խիստ պաշտպանության: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումները չեն կարող արդարացվել՝ պետական պաշտոնյաների հասցեին նմանարիպ քննադատությունները կանխելու համար:

Տվյալ պարագայում ակնհայտ են հետևյալ փաստերը, որ՝

ա/ Հայցվոր Հայկ Մարությանը զբաղեցնում է Երևան քաղաքի քաղաքապետի՝ բարձր պաշտոնը,

բ/Պատասխանողի քննադատությունն ուղղված է ոչ թե Հայկ Մարությանի անձնական կյանքի, այլ՝ հանրային իշխանություն ունենալու փաստի ուժով պայմանավորված պաշտոնեական լիազորությունների իրականացմանը,

գ/ Քննադատությունը եղել է մի կողմից՝ գնահատողական դատողությունների հիման վրա, մյուս կողմից պարունակել է սրեղծված իրավիճակը /վերջին տարում մայրաքաղաքի աղբահանության հայտնի խնդիրը, որը գտնում ենք հանրահայտ փաստ է և ապացուցման կարիք չունի/ պարկերավոր ներկայացնելու համար օգտագործվող խիստ արտահայտություններ ինչպիսիք են՝ «քաղաքային իշխանությունների հանցավոր անգործությունը» կամ «քաղաքապետարանը թաղված է կոռուպցիայի մեջ»:

դ/ Քննադատական վերոնշյալ ոճը հարույկ է հանրային բոլոր այն գործիչներին, որոնք զբաղվում են հանրությանը հուզող խնդիրներով և այդ համարեքստում առնչվում են հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց հետ:

ե/ Հանրային իշխանությունների գործունեության կոշտ քննադատությունը ոչ միայն թույլատրելի է այլ նաև անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: զ/Նման խոսքի սահմանափակումն անթույլատրելի է ՄԻԵԴ 10-րդ հոդվածի տեսանկյունից և իրենից ներկայացնում է անհամաչափ միջամտություն խոսքի ազատության իրավունքին և դուրս է գալիս կոնվենցիոն սահմանափակումների թույլատրելի շրջանակից՝ խաղալով անցանկալի գործիչների ու լրագրողների դեմ մահակի դեր»:

Վերոգրյալից բխում է, որ վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում որպես այն վարույթ ընդունելու հիմք նշել է բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 6-րդ կետերի, 57-րդ, 62-րդ, 66-րդ, 74-րդ, 177-րդ հոդվածի 3-րդ մասի, 191-րդ և 192-րդ հոդվածների ու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալը՝ պայմանավորված բողոքարկվող դատական ակտում վերը նշված նորմերի մեկնաբանությունը Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշման մեջ նույն նորմերին տրված մեկնաբանությանը հակասելու հետ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությունը՝ պայմանավորված բողոքարկվող դատական ակտը կայացնելիս ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում թույլ տալու հետ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ նշելով, թե իբրև Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի այնպիսի խախտում, որով խաթարվել է արդարադատության բուն էությունը, որպիսի հիմք (վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու), իմ կարծիքով, վճռաբեկ բողոքում նշված չէ:

Վերոգրյալը համարում եմ բավարար չանդրադառնալու համար Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված պատճառաբանություններին:

Նման պայմաններում հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման վերաբերյալ:

Դատավոր՝

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ